Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Գրիգորյան
թեմերգ

1903թ.

891.99
Գ 31

891.542-3 1009
Ф-37 31489
Грамматика
и фразеологи
1963

КЦИ - 3697 1/XI 79г.

ПК з. 243 т. 3.000.000

891.542-3
Փ—31

Վ. ՓԻՓԱՆԵՆՑ

ԽԵՂԹՔ

(Մի խեղճի հիշատակարանից)

ԵՎ

ՈՒՐԻՇ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

№ 3.

ԳԻՆԸ 10 ԿՊ.

1903

891.99
Խ-31
Ա 7
13 APR 2011

Վ. ՓԻՓՈՅԵՆՆ

ԽԵՆԹԸ

(Մի Խելօքի ցիշատակարանից)

ԵՒ

ԱՒՐԻԷ ՊԱՏՄԻԱՆ-ՔՆԵՐ

187

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մանսեն Վարդանեանցի
1903

ՀՍԽՀ — СССР

28.08.2012
59.999

Дозволено Цензурою. 14 Августа 1903 г. Тифл

Խ Ե Ն Թ Ը

(Մի խելօքի յիշատակարանից.)

I

Վաղուց էի կասկածում, որ նա խենթ պիտի եղած լինէր։ Մանկութիւնից նրա մէջ ինչ որ այլանդակ բաներ էին անցնում։ Դրացի էինք և փոքր հասակում խաղում միմեանց հետ։ Շատ չարն էր, երբէք հանգիստ նստել չըգիտէր. զոհունակութիւն ասած բանը չէր ճանաչում։ Ամենայն ուժով, մտքի ամբողջ կենտրոնացումով՝ կըձգտէր մի բանի. գլուխը կըկոտրէր, որ այդ ուզած բանին հասնի և երբ նրա տէրը լինէր, իսկոյն կըսկսէր տրիտրել։

—Իսկ այն կողմն ինչ կայ. կըհարցնէր միշտ։

Ես երբէք չըհասկացայ նրան։

Աշխոյժ էր և կրակոտ. այնպէս անհամբեր, որ Աստուած ազատի։ Բանն այն է, որ իւր տան մէջ էլ նրան չէին սիրում, որովհետև ոչ մի անկիւն չէր թողնիլ, որ ծածուկ մնար իրան։

Հետաքրքիր էր, ոչ մի արգելքի առաջ կանգ առնել չըգիտէր. կոտրում էր կողպէքներ, դռներ և ինչ որ ուզում էր տեսնել—տեսնում էր, յետոյ էլ գնում ծնողների մօտ և պարծենալով ասում, որ տեսել է ամեն ինչ։

Հէնց որ մի բարձր տեղ, մի բարձր ծառ, մի տանիք տեսնէր, կըկպչէր մեր օձիքից, որ բարձրանանք այնտեղ։ Դա իւր մեծ ախտն էր։

Անպլիտանը... վախ ասած բանը չունէր։ Կապիկի պէս բարձրանում էր եկեղեցիների գմբէթների վրայ... Մի խօսքով, ջղային դրութեան մէջ էր ընկնում եթէ տեսնում էր մի բարձր տեղ, ուր չէր բարձրացել ինքը։ Ասացի, որ մեզ էլ էր ուզում քաշ տայ իւր ետևից։ Վա՜յ էր եթէ վախ յայտնէինք և կամ չըբարձրանայինք։ Բոլորիս հետ կըկռուէր. եթէ ծեծ անգամ ուտէր՝ էլի կըկռուէր, կընախատէր, վախկոտ կըկոչէր...

Բանը նրանումն է, որ ծառի վրայ մագըլցել չըգիտէր.—«Կապիկ խօ չեմ կամ կատու»—կասէր, յետոյ կըբերար մի սանդուխք կըգրանէր, արիւն-քրտինք մտնելով քաշ կըտար

ծառի մօտ, կըկռթնեցնէր նրան և կըբարձրանար։

Այդ բոլորը նրա ոյժից վեր էին, բայց նա անում էր զարմանալի յարատևութեամբ։ Քրտինքն աղբիւրի պէս հոսում էր երեսն ի վար, աչքերը մեծանում էին, քունքի երակները ուռում, բայց նա ձեռքից սանդուխքը բաց թողնել չըգիտէր։ Քաշ էր տալիս իւր փոքրիկ ձեռներով. եթէ յոգնում էր, կանգ էր առնում և սանդուխքի կողքին նստում, քիչ շունչ առնելուց յետոյ նորից ելնում և չէր դադարում, մինչև որ ծառի ծայրը չըբարձրանար։

Երբ հասնում էր ծայրին, ընտրում էր ամենաբարձր ճիւղը—չէր էլ վախենում, որ կոտրւի—գնում էր դէպի նա, հեծնում և ժամերով, զմայլմամբ բարձրերը դիտում։ Պատահում էր, որ նրան չարչարելու համար սանդուխքը ետ էինք քաշում և ցած ձգում, երբ նա ծառի վրայ էր։ Չէր յուզւում. ուսերն էր թոթւում, արհամարհաբար ժպտում ու շարունակում հիացումով հորիզոնը դիտել։

Խենթ էր, Աստուած վկայ, հէնց մանկութիւնից սկսած, խենթ էր նա։

Ծնողները միշտ ծեծում էին նրան՝ այդ բարձրանալու ախտի համար։ Ցիշում եմ, որ մի անգամ էլ ծառի կէսից ցած գլորւեց և երկու շաբաթ անդամալոյծի պէս պառկեց։

Բայց երբ լաւացաւ, իւր առաջին գործն

էր նոյն ծառը բարձրանալ. և մինչև որ նրա ծայրին չհասաւ, ձեռք չբաշխեց նրանից։

Մեր տան կողքից սկսած բարձրանում էր մի լեռ։ Շատ բարձր չէր այդ լեռը. աւելի մի մեծ բլրակ էր և բաւական հեշտ՝ վրան ելնելը։ Գագաթին ունէր մի ժայռ։ Եթէ Հայկը—այդպէս էր նրա անունը—կորսուած լինէր, պէտք էր այդ ապառաժի վրայ փնտռել նրան։ Պառկում էր նա այնտեղ և դէմքը երկնքին դարձրած՝ դիտում անհունութիւնը։

Ցիշում եմ, որ մի անգամ հայրը բարկացած գնաց ինձ հետ նրա ետևից և ականջները սաստիկ ոլորեց։ Հայկը ասես լաց եղաւ. երբէք. այլ երբ հայրը մի քանի նախատինքներ տեղալուց յետոյ՝ ձեռքիցը բռնած իջնում էր—հարցրեց.

—Հայրիկ, այն ամպերից յետոյ ինչ կայ...

Միասին էր որ ուսումնարան մտանք։ Ուսումնարանումն էլ նա նոյն խենթը մնաց։

Այնպիսի դժուար, անհասկանալի հարցումներ էր տալիս վարժապետներին, որ նրանք համբերութիւնից դուրս էին գալիս և երբեմն էլ սաստիկ պատժում նրան։ Դասերը սովորելու մէջ շատ ընդունակ էր, միայն թէ ոտանաւորներ չէր սիրում սերտել։

Հակառակի պէս էլ մի վարժապետ ունէինք, որ անդադար ոտանաւորներ էր անգիր

անել տալիս և եթէ բան է, չըգիտենայինք, ամեն մի չըգիտցած տողի համար մի-մի քանոնի հարուած էր խփում ձեռքներիս։ Ցիշում եմ, որ ամենից շատ հարուածը Հայկն էր ստանում. բայց երբ ձեռքերը լաւ կարմրում էին—չէր էլ լաց լինում—նայում էր ուսուցչին և բարկացած ասում.

—Ոտանաւորներ չեմ ուզում։

—Ինչպէ՞ս թէ չես ուզում, անպիտան, գոռում էր ուսուցիչը.—քո կամքո՞վն է։

—Սովորողը ես չեմ, տրամաբանում էր Հայկը,—ինչքան կուզէք՝ ծեծէք, չեմ սովորիլ։

—Ի՞նչու ախր, մի՞թէ դժուար է միտը պահել։

—Դժուա՞ր... հեգնում էր Հայկը—մի քանի բոպէի մէջ կըսովորեմ. բայց... չեմ ուզում. շատ սեղմուած բան է երևում ինձ։

Եւ իսկապէս շատ յետոյ էլ, երբ նա մեծացաւ, համալսարանից վերադարձաւ, ասում էր ոտանաւորներն ընդհանրապէս և նրանց համար ասում էր թէ «ինչո՞ւ են աշխատում սեղմել միտքն ու զգացմունքները չափի և սահմանի մէջ...»

Ժամայլմամբ էր կարդում միայն մի քանի բանաստեղծների, մանաւանդ Վիկտոր Հիւգոյին և Բայրընին։

—Բարձր են դրանք... ասում էր նա։

Միշտ բարձրութեան ձգտելու այդ ախտն էր, որ մեծանում էր իմ խեղճ Հայկի մէջ և խենթացնում նրան։

II

Այդպէս, երբ տարրական դպրոցը վերջացրեց, նրա ծնողները հեռացան մեր քաղաքից. այնքան հեռու, որ երկար տարիներ չըտեսայ Հայկին և չըլսեցի էլ նրա մասին։

Անցան տասնեակ տարիներ։ Ես շատ բան տեսայ, շատ ման եկայ։ Գործերս յաջող գնացին, մի լաւ պաշտօն գտայ և յետոյ Աստծու տաւածից, մի քիչ էլ հարստութիւն դիզեցի։ Բայց Հայկին մոռացայ։ Քսան և եօթ տարեկան էի և գործերս փայլուն դրութեան մէջ դրած, հանգիստ կեանք էի վարում, երբ յանկարծ հանդիպեցի նրան։

Ի՞նչ էք կարծում, ի՞նչով էր զբաղւում... վարժապետութիւնով։ Տարիներով տանջուել այնպէս, ինչպէս նա էր տանջուել—ինձ պատմեց բոլորը—գնալ մուրացկանութիւնով բարձրագոյն կրթութիւն ստանալ և ապա ուսուցիչ...

Միշտ նոյն խենթն էր մնացել։ Երբ հանդիպեցի նրան, մոռացել էի նրա բարձրութեան ձգտելու ախտը։ Խնդրեցի, որ ինձ մօտ գար։ Երկար խօսեցինք։ Փոխուել էր խեղճը. զգալի կերպով դէպի գերեզման էր գնում։ Ես լսել եմ, որ խենթերը ամենից աւելի ծիւրախտ են ստանում։ Կարծում եմ, որ նա էլ ծիւրախտ պիտի ունենար։ Աչքերը նոյն երազող, խոր և բոցավառ արտայայտութիւնն ունէին։ Բայց այնքան էլ դեռ գիժ չէր։ Մաքուր էր հագնւում և շատ քաղաքավարի էր բոլորի հետ։ Այդտեղ իսկ նա իւր խենթութիւնն էր ցոյց տալիս։ Եթէ, բան է, անցնելու ժամանակ մի բեռնակրի անգամ դիպչէր, գլխարկը կըհանէր և ներողութիւն կըխնդրէր։

Բաւական մտերմացաւ. գալիս գնում էր ինձ մօտ յաճախ, լսում էր ինձ մօտ եկող հիւրերի խօսակցութիւնը, երբեմն խառնւում էր և վիճաբանում։ Բայց երբ տաքանում էր, Աստուած ազատի, այնպիսի այլանդակ, անսովոր—իւր ասելովը «բարձր»—բայց պարզապէս ծիծաղելի գաղափարներ էր՝ յայտնում, որ հիւրերս միմեանց երեսին էին նայում և լուռ մնում. մինչև իսկ մէկը մէկ օր ասաց.

—Ախպէր, էս գժին ինչպէս ես տուն թողնում։

Գիժ էր, այո, Հայկը—դրան խօսք չկար —բայց ճշմարիտն ասել՝ լաւ, անվնաս տղայ էր։ Նրա ասածները միմիայն ծիծաղ էին շարժում։

Երբեմն, իհարկէ, վիրաւորւում էին պատուաւոր մարդիկ, բայց երբ տեսնում էին, որ Հայկը խենթ է, ներում էին նրան։

Միշտ տխուր էր նա, շատ քիչ էր ծիծաղում և անդադար երազում էր։

Մի օր էլ, երբ միասին զբօսնում էինք դաշտում—ասաց.

—Էհ, եղբայր, այս ինչ ցած ու նեղ տեղերի վրայ էք բնակւում կամ զբօսնում. մի՞թէ աղատ բարձրութիւններ չկան այս երկրում։

Ա՜հ, բարձրութիւն... Ահա նորից Հայկիս խենթութիւնը բռնեց։

—Էլի նոյն խենթն ես. դիտեցի ես։

—Խենթ. գոչեց նա—բարձրութիւն, ազատութիւն սիրելը խենթութիւն է։

—Ի հարկէ. եղբայր, քանի որ եղած տեղումդ, եղած դրութեան մէջ հանգիստ ես, ոչ ոք չէ վնասում քեզ, ինչու իզուր գնալ բարձրերում, նեղութիւն քաշել, յոգնել, վտանգների ենթարկւել...

Ծպտեց և չըպատասխանեց։

—Բարձր տեղ ես ուզում, հեգնեցի ես —ահա արեգակը, բարձրացիր այնտեղ։

—Շատ կուզէի... պատասխանեց լրջութեամբ—բայց... արեգակը շատ ցածր է դեռ։

—Արեգակը ցածր է... ինչ՞ը ես դուրս տալիս, եղբայր, մի՞թէ արեգակից բարձր բան կայ։

—Ինչո՞ւ չէ, ասաց նա—միլիօնաւորները կան։

—Ինչ՞ը, օրինակ։

—Զանազան մեծութեամբ երկրագնդեր, աշխարհներ, արեգակներ, որոնց մօտ մեր արեգակը մի փոշի է։

—Շատ լաւ ուրեմն, հեգնեցի նորից—բարձրացիր դրանցից մէկի վրայ։

—Նրանք էլ ցածր են դեռ։

—Վահ... մի՞թէ էլի բարձրը կայ։

—Ի հարկէ... քանի բարձրանաս, այնքան դեռ ցածր ես, դեռ էլի կայ բարձրանալու։

Եւ այսպէս միշտ դէպի վե՛ր, դէպի վե՛ր...

Նայեցի դէմքին։ Աչքերն այնպէս երազում էին և այնպէս ոգևորւած, որ հարկ համարեցի հանգստացնել նրան։

—Լա՛ւ, լա՛ւ, ասացի—թող քո ասածը լինի. գնա՛, դէպի վեր, միշտ դէպի վեր...

—Իսկ դո՛ւ. հարցրեց յանկարծ ինձ դառնալով։

—Ե՞ս,—ասացի վախեցած—չէ՛, եղբայր, իմ տեղս շատ լաւ է. փառք Աստծու, տուն ու տեղ ունիմ, տոկոսով էլ փող տւած բան-

կում. ստամոքսս էլ հիւանդ չէ։ Դու կուզես գնա, իմ տեղս շատ հանգիստ է։

—Բայց այդպէս ցա՜ծ...

—Ով որ ցած տեղերում ապրի—վարդապետեցի ես—նա ընդմիշտ՝ ընկնելու վտանգից ազատ կըլինի։

Լռեց և երեսը դարձրեց։ Քիչ յետոյ լսեցի, որ ասում էր տխրութեամբ.

—Ասուած իմ, որքա՜ն տխուր է մենակ լինելը...

III

...Ինչպէս որ տարօրինակ էր խենթը, այնպէս էլ տարօրինակ կերպով անհետացաւ։ Ակնատես էի նրա կորուելուն։

Մի օր, երբ մեր դաշտից սկսեցինք լեռները բարձրանալ, կանգ առինք առաջին բըլրակի գլխին։

Ցոգնել էի, ուզում էի վերադառնալ։

Բլրակից այն կողմ փռւում էր մի դաշտակ, որից յետոյ բարձրանում էին հսկայ և բարձր լեռները։ Սկսելով բլուրներից, լեռնաշղթան հետզհետէ իւր ամենաբարձր գագաթով ամպերն էր գլուում և արևի ճառագայթ-

ներից, իւր վրայի մշտակայ սպիտակութիւնը փողփողեցնում։

Հայկը երբ այդ տեսաւ, հիացումից գըժուեց. բռնեց թևիցս և ստիպում էր, որ գնանք «այնտեղ—բարձր»։ Վազում էր նա, առաջ սրանում... Իսկ ես զրեթէ գլորւում էի, քաշ գալիս գետնի վրայով։

Այդպէս նա քաշ տաւ ինձ մինչև լեռնաշղթայի ստորոտը։ Այնտեղ ես մնացի ընկած։

—Թող ինձ, եղբայր, ձայնեցի—ինչ ես ուզում ինձնից. ուզում ես բարձրանալ. համեցէք, գնա՛ ուր որ կուզես և ինձ հանգիստ թող։

Ու գնաց, սրացաւ դէպի վեր։ Նստած տեղից տեսնում էի թէ նա ինչպէ՞ս հեալով, բայց նոյն արագութեամբ և խենթային կամակորութեամբ, բարձրանում էր։

Ո՞ւր էր գնում այդպէս։

Զուտով արեգակն էլ ծածկուեց ամպերով և ստուեր ձգեց լեռնաշղթայի վրայ։

Զատ պարզ տեսնում էի խենթին։

Նա գնում էր. երբեմն կանգ էր առնում շունչ քաշելու համար և ապա առաջ գնում, միշտ բարձրանում...

Ցաճախ անտեսանելի էր դառնում։

Կարծում էի թէ գլորուել էր մի անդունդի մէջ։ Բայց նա նորից երևան էր գա-

լիս։ Եւ գնում էր անընդհատ։ Սկսեցի կանչել։

—Դարձիր, եղբայր, գոչեցի—ուր ես գնում այդպիսի բարձրութիւնների վրայ. կը մրսես. քաղցած կըմնաս, մենակ կըլինիս։

Բայց նա գնում էր միշտ և առանց ետ իսկ նայելու։ Մի անգամ նստեց մի ապառաժի վրայ և ցած նայեց։ Արևի մի աղօտ ճառագայթ, մի թխպոյն ամպի պատուածքից անցնելով, ողողում էր նրա դէմքը։ Մաղերը ծածանւում էին քամուց։ Ձեռքը դէպի վեր, ինձ էր ցոյց տալիս սպիտակափառ բարձրութիւնները։ Կարծես հրաւիրում էր գնալ, հետևել իրան։

Տեղիցս չըշարժւեցի։ Խենթ էի։

Վերջապէս վերկացաւ նորից, մի ըոպէ երևցրեց իւր երկար սուերն ու ծածանւող մաղերը, ապա քայլեց առաջ և հետզհետէ հեռանալով՝ անհետացաւ դէպի բարձրաբերձ գագաթները... Իմ ցածրութիւնից էլ չէի տեսնում նրան։ Այդպէս այլանդակօրէն կորսաւ խենթը։ Էլ չըվերադարձաւ նա։ Իմ ծանօթներից և ընկերներից ոչ մէկը չէ տեսել նրան։

Հաւատի եմ, որ քաղցած պիտի մեռած լինի նա իւր ձգտած փայլուն բարձրութիւնների վրայ...։

Խենթը...

Երբ այս պատմութիւնը սողունները կարդացին, գտան, որ «խելօքը» իրաւունք ունէր, որ բարձրանալու փափագը կատարելապէս խենթութիւն է, քանի որ գետնի երեսին և ցած տեղերում ապրելը աւելի հեշտ է և գիրացնող...

ՆԻՐԻԱՆԱ

—Ո՜վ արդար, նուրբ և զօրեղ Աֆիոն, դու՛ ես այն միակ ամոքիչ բալասանը, որ մխիթարում է ճնշած արդարին։ Ճարտարախօսութեան կարողութեամբ զինաթափ ես անում կատաղութեան և բռնութեան ամէն վճիռ, և անհունութեան համար՝ յանցաւոր մարդուն վերադարձնում ես իր երիտասարդական մաքուր յոյսերը։ Խաւարի կրծքի վրայ, հոգու երևակայական նիւթերով՝ կառուցանում ես դու այնպիսի վայրեր, որոնք աւելի գեղեցիկ են՝ քան Ջիրազի հովիտները։ Երազներով լի քնոյ խորքերից վեր ես հանում գեղեցկութեան իսկական տիպարներ և աչքի առաջ ես բերում այնպիսի դէմքեր, որոնք սիրելի են մեզ... Դու՛, դու՛ միայն ունիս արդարութեան կշիռը, դրախտի մուտքը, ո՛վ արդար, նուրբ և զօրեղ Աֆիոն...

Ամառնային արևի տակ, հին պատմուճանի մէջ պարուրուած, դողում էր նա ցրտից։

Մումիայի նման չոր, կանաչ-սևագոյն դէմքով մի դերուիշ էր այդ, որ կծկուած՝ քաղաքից ոչ հեռու գտնուող հողաթմբի մօտ, խամրած աչքերը տարածութեան մէջ մոլորուած՝ շրթունքներն էր միայն շարժում, և խուլ, դողդոջուն ձայնով՝ այդպէս աղօթում։

Տեսել էի նրան երբեմն, քնաշրջիկի նման պատերի տակովն անցնելիս։ Այժմ մօտ գնացի։

Երբ վերջացրել էր այդ տարօրինակ աղօթքը ուղղուած աֆիոնին (օպիում), լռեց և գլուխը կրծքին՝ արձանացաւ։

—Զոգ չէ՞ այստեղ, հարցրի մեղմութեամբ։

Ցնցուեց, գլուխը բարձրացնելով՝ նայեց ինձ և ասաց.

—Ցուրտ է... Աշխարհումս միշտ ցուրտ է։

—Մրսո՞ւմ ես միթէ։

—Տանջւում եմ միայն...

—Ո՞րտեղդ է ցաւում։

—Ո՛չ մի տեղ... և ամեն տեղ։

—Իսկ ո՞վ ես դու։

—«Ոչ-ոք»...

—Ոչ ո՞ք։

—Այո։

—«Ոչ-ոքը» գոյութիւն չունի,—ասացի ես—«ոչ-ոք»-ը անհասկանալի բան է։

—Եւ սակայն կայ։ Մենք ենք այդ—մոռացութեան և երազային նիւթերից կառուց-

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—СССР
1004/31487
3989

ւած վայրերի բնակիչներս... Դու չըգիտես ինչ է «Ոչ-ոքը»։

—Չըգիտեմ։

Այժմ նա ուղղուեց քիչ, զննեց ինձ երկար և մի բոպէի լռութիւնից յետոյ՝ ասաց.

—Պատահել է քեզ չօշափել քո իսկ մարմինը և մատներիդ տակ չըզգալ ոչինչ. պատահել է՝ պրպտել ուղեղդ և չըգտնել այնտեղ ոչ մի միտք... և կամ զգալ՝ որ կարծես թեթեւացել ես մարմնիդ ծանրութիւնից և աննիւթ մի էակ ես. որ ոչ սրտի ճնշումն ես զգում, ոչ ուղեղի տանջանք և ոչ էլ մարմնի պահանջներ... Եթէ պատահել է—ահա այդ ժամանակ դու «Ոչ-ոք» ես...

—Չէ պատահել ինձ այդպիսի բան։

—Իսկ ոգիոն ծխել ես երբէք։

—Ոչ։

Դժկուեց ու խուլ և միաձայն՝ ասաց.

—Արդեօք, իմ «Ոչ-ոք» լինելուց յետոյ, մարդիկ փոխուել են. սկսել են այլ ես չուտել, չըպատառոտել իրար. արդեօք այս աշխարհը փոխել է իր արարածները և եթերային, աւելի բարձր էակներ ծնել. արդեօք մարդիկ այլ ես պէտք չունին մոռացութեան...

—Աշխարհը նոյնն է—ասացի—և գուցէ աւելի վատթար դարձած։

—Ուրեմն դու ապուշ ես.—ասաց նա խստութեամբ.—ապուշ՝ որ չուրջդ նայում ես

և ոչինչ չես տեսնում, որ ապրում ես իբր բոյս և տանջուել չըգիտես. սիրտդ ուրեմն ազատ է վէրքերից՝ որպէս գանգդ ուղեղից... աչքերդ երկի կոյր են՝ թէև տեսնում ես... կամ գուցէ մի հարուստ իշխան ես ցեխային սրտով և ոսկեայ բիբերով... Գնա՛ ուրեմն առջեւիցս և թոյլ տուր ինձ տաքանալ...

Դէբուիշը ոչ միայն օպիում ծխող էր, այլ և արեւելեան այն տարօրէն փիլիսոփայ-երազողներից, որ կեանքի դառնութիւնները ուսումնասիրած, գուցէ և խիստ տանջուած, ապաւէն էր գտել մի՛միայն մոռացութեան մէջ։

Աղօթքը գրաւել էր ինձ։ Վաղուց ուզում էի գտնել մի օպիում ծխողի, որ կարողանար հետեւողաբար, առանց ցնորքանութեան, պատմել ինձ օպիումով արբեցողի զգացածը։

Գտել էի ուզածս. չըհեռացայ։

—Ի՞նչ—ասացի ես.—միթէ՞ մարդս անպատճառ պիտի տանջի և պէտք ունենայ մոռացութեան։

Եւ նստեցի կողքին։

Քիչ լռեց և ասաց։ (Առ հասարակ, երբ ես մի բան էի հարցնում, նա, պատասխանելուց առաջ, միշտ մի բոպէ լուռ խորհրդածում էր և ապա խօսում։

—Մարդս թէև տանջելու պէտք չունի,—ասաց նա—բայց տանջւում է. և այդ պատ-

:ղոդրեսնոսսր վդոս ժոդեռ տդ ,իսոտմ

Ուզում էի հարց տալ թէ ինչու մարդ տանջւում է, բայց նա իսկոյն շարունակեց.

—...Մարդը «Մի բան» է («Հիզ»). և այդ «Մի բանը» սիրում է ուտել իր ընկերոջ, տանջել իր եղբօրը. այդ «Մի բանը» հրճւում է եղբօր տանջանքով, ծծում է նրա երջանկութիւնը։ Այդ «Մի բանը» Աստծու բոլոր արարածների մրուրն է, որ սևացնում է իր շուրջը. այդ «Մի բանը» այնքան ամուր կպած է իր կաշին, որ իր գոյութեան համար յոշոտում է իր նմանին, հաճոյքի համար պլեղծում Աստծու աշխարհը, ընկերոջ արիւնի մէջ զովանում, եղբօր քրտինքով ուռճանում... Այդ «Մի բանը», որ կոչւել է «մարդ», ստոր է քան յետին սողունը, կատաղի է քան բորենին և անյագ ու ծարաւի՝ քան արիւնխում վագրը։ Այդ «Մի բանը» գոյացնում է տանջանքը. և տանջւողը, եթէ չէ կարող ինքն էլ տանջող դառնալ՝ պէտք ունի մուռացութեան...

Ապա քիչ լռելուց յետոյ՝ աւելացրեց խուլ ձայնով.

—Այդ «Մի բանը» մինչ զրելի արարած է մանաւանդ, երբ նա քնած է...

—Երբ քնած է...

—Այո, երբ քնած է։ Այն դրութեանը, որին դուք «արթնութիւն» էք կոչում—դա ինքը քնածութիւնն է։ Արթնութիւնը՝ քնելն է. զարթնել՝ նշանակում է «Մի բանից» դառնալ «Ոչ-ոք»...

—Հեմ հասկանում։

—Հես հասկանալ, որովհետև քնած ես։

—Քնած եմ...

—Այո։—Ի՞նչ ես տեսնում դու օրինակ կամ ի՞նչ զգում... Ասացիր հոգ է. և սխալւում ես, որովհետև մարդկանց պիղծ, եղբայրասպան շունչը սառեցնում է բնութիւնը։ Ուտել ես ուզում—այդ նշանակում է որ դու գազան ես. զգում ես ատելութիւն կամ սէր դէպի որոշ ընկերներդ, դու կարող ես զայրանալ, խփել, կատաղել, արիւն հոսեցնել. կարող ես մտածել թէ ինչպէ՞ս ճնշես եղբօրդ, մերկացնես ընկերոջդ, լեցնես սնդուկդ մետաղով և այդ մետաղով թոյն պատրաստես տանեակ նմանների սպանելու, տանջելու համար... Ահա ուրեմն դու «Մի բան» ես. ուրեմն դու քնած ես. քնած ու կատաղի, քնած ու գազան, քնած ու վայրենի, ստոր, լպիրշ ու կեղծաւոր...

Լուռ դիտում էի դէրվիշին, որ հայեացքը տարածութեան մէջ, խորունկ շեշտով ասում էր այդ բոլորը։

—Յետոյ.—խօսեցի վերջապէս.—ուրեմն քնած եմ... Եւ երբ արդեօք կըզարթնեմ.

—Երբ «Ոչ-ոք» դառնաս, երբ դադարես «Մի-բան» լինելուց։ «Ոչ-ոքը» մի էակ է,

որ ոչ տանջուում է և տանջում, ոչ կեղեքուում է և կեղեքում և ոչ գաղանաբար ուտուում է իր նմաններին... «Ոչ-ոքը» մի էակ է, որ խաւարի մէջ կանգնեցնում է լոյսի պալատներ և այնտեղ հրճուում իր նմանների բախտաւորութեամբ։ «Ոչ-ոքը» մի արարած է, որ իր կեանքում մի կաթիլ քըրտինք կամ մի կաթիլ արիւն չունի ծանրացրած իր հոգու վրայ... «Ոչ-ոքը» արթուն մարդն է, Աստծու մեծ և բարձր էակը, որ միմիայն բարի է, բարի և բարի...

—Իսկ դո՞ւ, «Ոչ-ո՞ք» ես։

—Այժմ ոչ։ Այժմ ես քնած ու տանջող «Մի բան» եմ... Բայց, փոքր մի ես և դարձեալ «Ոչ-ոք» կըլինեմ։—Այժմ ես մի ճանապարհորդ եմ, որ հեռաւոր-երջանիկ աշխարհներից դուրս եմ շպրտուել քնածների մէջ և այդ՝ մի տեսակ քաւութիւն էլիմ անցեալ գաղանութիւնների...

—Իսկ ինչ ես տեսնում դու այդ երջանիկ աշխարհներում։ Արդեօք այնտեղ «Ոչ-ոք»-ները չեն թշուառացնում, չեն տանջում միմեանց...

—Երբէք... Այնտեղ «Ոչ-ոքը» միմիայն ապրում է և ապրում առանց տանջանքի։ Պէտք չունի նա ուրիշների քրտինքի արդիւնքին և երջանիկ է իր «Ոչ-ոք»-ութեամբ և իր աղատ ու մաքուր հոգով։

—Պատմիր ինձ թէ ինչպէս ես գնում այդ աշխարհը և թէ ինչ ես տեսնում դու այնտեղ։

Դէբուիշը նայեց ինձ. աչքերի մէջ մի վարկեան փայլեց կենդանութեան նշոյլ։

—Դո՞ւ էլ ուրեմն տանջուում ես.—հարց ըեց նա։

Տխուր՝ ժպտացի։

—Ուզո՞ւմ ես գնալ «այնտեղ»...

—Առաջ կուզէի լսել այնտեղի մասին։

—Ես քեզ կըպատմեմ։

Ու քիչ լռելուց յետոյ, սկսեց պատմել։

—...Այնտեղ ցածում,—խօսեց նա հետզհետէ ոգևորուելով—ծառերի մի խմբի տակ, սպիտակ վրանի մէջ պառկում եմ ես՝ յոգնած քնելուց ու տանջելուց... Պառկում եմ գետնի վրայ՝ գլուխս մօտ կանթեղի պատրոյգին և նուիրական «բաֆուր»-ը ձեռքիս։ Դա այն խնկամանն է, որի ծխի հետ մարդ սրանում է դէպի մոռացութեան աշխարհը և «Ոչ-ոք»-ութեան բարձրութեան հասնում։ Եւ երբ ծխում եմ, եռացող ափիոնը յիշեցնում է իր հոտով՝ վառուող շաքարն ու խնձորը—քաղցրութեան և անուշահոտութեան մարմնացումները, որոնց բուրմունքը հաճելի են բարձր էակին...

...Քառորդ ժամ դեռ ես քնած եմ ես, դեռ տեսնում եմ շուրջս գաղանների և արդարութիւնը չահագործողների կամ տանջող

էակների չար ու ողորմելի դէմքերը... Եւ ապա, հեաղհեաէ, մարմինս սկսում է մի անբացատրելի հանգստութիւն զգալ։ Թւում է թէ մտնում եմ մի նոր աշխարհ։ Եւ այդ աշխարհի դռան շէմքին դնում են ինձ կաթով լի աւազանի մէջ, ուր լողում եմ ես անվիշտ և անցաւ... Մարմնիս ծանրութիւնը թեթեանում է, հեաղհեաէ, նա, հին, ցնցոտի հագուստի պէս փոշիացած՝ ընկնում է և հոգիս մաքուր, «Ոչ-ոք» դարձած՝ ազատ սաւառնում է միայնակ ու ինքն-իրան միայն զոյութիւն ունեցող...

Եւ ես, «Ոչ-ոք» դարձած, լի բարութեամբ, լի կարեկցութեամբ ու անկեղծ մաքրութեամբ, կաթի աւազանից մտնում եմ վրճիտ, դաղջ ու անուշաբոյր ջրերի մէջ, ուր լողում եմ մեղմիկ, առանց ջանքերի, լողում եմ առանց շարժւելու, առաջ եմ գնում՝ առանց ճիգ գործելու...

Ու, վաղուցւայ յիշողութիւններ, մաքուր, աղնիւ ու բարձր յիշողութիւններ, որոնք ջընջւել էին մտքիցս, նորից գալիս են հոգիս վսեմացնելու... Ահա այն շքեղ երգը, որ մի անգամ միայն լսել էի նւագելիս՝ լսում եմ դարձեալ, ծայրէ-ծայր լսում. և հոգիս խաղաղ, լողում է ծփացող ջրերի վրայ, հոգիս պայծառ և սուր, ընդունակ է ամեն արցունք սրբելու, ամեն դաղանի արիւնոտ ատամները

կորզելու և ամեն գրկւածի, ընկածի՝ գրկելու, սրտիս սեղմելու... Զգում եմ, որ պայծառացած հոգիս տենչում է սրանալ դէպի վեր և այնտեղից խօսել մարդկանց՝ սիրոյ և բարութեան մեծ, վսեմ խօսքեր. զգում եմ, որ անկեղծ և բարձր մտքեր յուզում են կուրծքս և բերանս երգում է ազատայ մաքուր և տանջանքներից զուրկ կեանքի դրւատներ... Դրւատներ, որոնք ներշնչւած են անկեղծութեան, բարօրութեան և հաւասարութեան շքեղ երաղներով...

Եւ հեռուն, վարդագոյն հորիզոնի վրայ տեսնում եմ ազատայ մարդկութիւնը ներքին աղնւութիւնից փայլող ժպտուն դէմքերով, տեսնում եմ այն ամենը՝ ինչ լաւ է, աղնիւ է, արդար... Եւ հրճւում է հոգիս, սաւառնում տարածութեան մէջ ու բերանս երգում է այնպիսի երգեր, որոնք աւետում են ազատութիւն՝ ճնշւածների, կեանք՝ թշւառների և երջանկութիւն՝ տանջւողների...

Այսպէս խօսեց դէրւիշը և լռեց։

Նրա աչքերը, կարծես բիբերից զուրկ, սևեռած էր հեռուն, անյայտ տարածութիւնը և կարծես այլ ես ոչինչ չէր տեսնում այստեղ—մեր աշխարհի եղածներից։

Ե՛ս էլ լռեց էի. դէրւիշի ոգեորւած խօսքերի ազդեցութեան տակ մի բոպէ ես էլ լռեցի։ Ցեռոյ հարցրի մեղմութեամբ.

—Իսկ երբ զարթնում ես...

Ցնցուեց, բիբերը երևեցին և նա ասաց.

—Ի՞նչ... երբ քնում եմ...

Ապա խոր, տխուր շեշտով մրմնջաց.

—Միայն տանջւում եմ... Այն ժամանակ ես զգում եմ դժոխային այն բոլոր անբացատրելի տանջանքները, որ չեն կենտրոնանում մարմնի ո և է մասում, բայց ուտում-մաշում են ուղեղս, սիրտս... այն ժամանակ ցաւում է ամեն տեղ՝ և ոչ մի տեղ... Եւ ահա, տես, միմիայն մրսում եմ և տանջւում... Շատ սառն է մարդկային շունչը և շատ դարշելի... Հեռո՞ւ գնա ինձնից...—Մարդս ծնւել է միմիայն տանջւելու համար այս աշխարհում. և երջանիկ կարող է լինել միայն այնտեղ, այդ հեռաւոր—երազային բարձրութիւնների, այդ անծանօթութեան մէջ... Մարդս «Մի բան» է, և երջանիկ է միայն այն ժամանակ, երբ «Ոչ-ոք» է...

—Իսկ դու ոչինչ չես ուտում, ոչինչ չես խմում։

—Ուտում եմ, խմում եմ... միմիայն տանջանք... Երբ «Ոչ-ոք» եմ, այն ժամանակ ինձ ոչինչ պէտք չէ. որովհետև ստամոքս չեմ այլ ես, այլ հոգի...

—Բայց չէ՞ որ աֆիոնը կարող է միայն չորացնել և վերջ ի վերջոյ մահացնել քեզ։

—Աֆիոնը... Նա է կեանքի ճանապարհը,

նա է անծանօթ վայրերի մուտքը։—Եթէ ուզում ես ապրել, եթէ ուզում ես մոռանալ՝ աֆիոն ծխիր...

Ապա խօսքն ընդհատեց և նոյն խորունկ ու խուլ մրմնջիւնով՝ սկսեց աղօթել.

—Ով արդար, նուրբ և ազդեցիկ Աֆիոն. դու, խաւարի կուրծքի վրայ, հոգու երևակայական նիւթերով՝ կառուցանում ես այնպիսի՞ վայրեր...

Ոտքի ելայ մեկնելու.

—Մնաս բարև, «Ոչ-ոք»...

—Երթաս բարև, «Մի-բան»...

Դէրուիշը երջանիկ էր. կարող էր մոռանալ...

1901

ՆՈՐ-ՏԱՐԻԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Մի կատակ)

Ցիմմը բան է և շատ գռեհիկ է դարձել, երբ ամեն տարի այսօր, մարդիկ միմեանց տեսնելիս՝ «Ձնորհաւոր նոր տարի» են ասում։

Ի՞նչ կայ շնորհաւորելու։ Տարին մեր բարեմաղթութեան է կարօտ՝ իր շնորհքները ցոյց տալու համար։

Եւ վերջապէս սխալ չէ՞ այդ խօսքերով հանդիպել միմեանց։ Աւելի լաւ չէ՞ր լինիլ, եթէ մարդիկ, այսօր միմեանց տեսնելիս՝ ասէին իրար.

—Հերիք չէ՞, եղբայր, մի՞թէ այս տարի էլ պիտի ուտես ինձ...

Բայց ինձ թւում է և այդ աւելորդ։ Մարդիկ եթէ իրար չեն ուտում կամ չեն խածոտում, ոչ ապրել կարող են և ոչ ուռճանալ։

Ա՛յ, ես ձեզ կըպատմեմ իսկոյն, թէ ինչպէս մի մարդ իր եղբօրը կերաւ հէնց այդպէս մի նոր տարի-օր։

...Սրանից տարիներ առաջ, ապրում էր աշխարհումս մի նիհար պարոն։

Այժմ նա գեր է, որովհետև սովորեց իր ընկերներին ուտել։—Ոչ մի բան այնքան չէ գիրացնում, որքան ընկերոջ միսը։—Թող փորձեն նիհարները։

Ուրեմն, սրանից շատ տարի առաջ, ապրում էր աշխարհումս մի նիհար պարոն, որ միշտ անօթի էր։

Այժմ նա կուշտ է, որովհետև ամեն օր մարդու արիւն է խմում։—Ոչինչ չըկայ կշտացնող, քան եղբօր արիւնը։—Թող փորձեն ծարաւները։

Այդպէս, սրանից շատ տարիներ առաջ, ապրում էր աշխարհումս մի նիհար պարոն, որ միշտ անօթի էր և միշտ էլ աղքատ։

Այժմ նա հարուստ է, որովհետև ամեն օր դատարկում է իր եղբօր գրպանները։—Ոչինչ չըկայ հարստացնող, քան ընկերոջ գրպանը։—Թող փորձի աղքատը։

Դառնանք պատմութեան... Սրանից շատ տարիներ առաջ, ապրում էր աշխարհումս մի նիհար պարոն, որ միշտ անօթի էր, միշտ աղքատ և ողորմութիւն էր խնդրում փողոցներում։

Այժմ նա ողորմութիւն է ցրւում փողոցներում, որովհետև ոչինչ չըկայ հուշակող, քան ընկերոջ արիւնի աւելորդովը՝ բարեգործութիւն անել։—Թող փորձի փառասէրը։

Եւ այդպէս ուրեմն, սրանից շատ տարի-

ներ առաջ, աշխարհումս ապրում էր մի նիհար պարոն, որ մի՛շտ անօթի էր, մի՛շտ աղքատ, ողորմութիւն էր խնդրում փողոցներում, պառկում աղբանոցներում։

Այժմ նա պառկում է պալատներում, որովհետև ոչինչ չըկայ պալատների տէր դարձնող, քան ընկերին աղբանոց շպրտելու արհեստը։—Թող փորձի հեշտասէրը։

...Բայց—կասէք ինձ վերջապէս—այս ինչ ես անում, պարո՛ն գրող, դու մեզ դեռ չըպատմեցիր թէ ինչպէ՞ս նոր տարի օրը մի մարդ կերաւ իր եղբօրը։

Բայց—կասեմ ձեզ—պարո՛ն ընթերցող, որ ես արդէն պատմեցի թէ ինչպէս ամեն օր մարդիկ ուտում են իրանց եղբօրը։ Եթէ կըգտնէք, որ մարդիկ նոր տարի-օրով խնայում են միմեանց և որ նրանք իրանց նմանի արիւնով չեն գիրանում և ուռճանում...

Այն ժամանակ միայն կըպատմեմ ձեզ թէ ինչպէս միայն մի մարդ՝ կերաւ իր եղբօրը՝ նոր-տարի օրը...

Ընորհաւոր ուրեմն ձեզ նոր տարի, ով գեր, առողջ, հարուստ և պալատների մէջ քնող պարոններ։ Կերէք ձեր ընկերներին, խմէք նրանց արիւնը, նետեցէք նրանց աղբանոցների վրայ... Եւ, երբ զարթնանալ կամենաք... բարոյախօսեցէք...

1901

ԱՆՄԱՀԱՑՆԵԼՈՒ ԴՈՐԾԵՐ

(Բարեգործութիւն, Առատաձեռնութիւն և Ջերմեռանդութիւն).

I

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

...—Շատ լաւ էք ասում. համաձայն եմ ձեզ հետ. բարեգործութիւնը ազնիւ բան է. ի հարկէ, ես ըստ չափու կարողութեանս՝ կըմասնակցեմ։ Հարիւր ռուբլի բաւական է... Ինչ էք ասում.—ժողովո՞ւմ գամ։ Ինչո՞ւ չէ, կըգամ. անպատճա՞ռ կըգամ.... Նպատակը ա՞յդ է։ Հիանալի եմ գտնում.—ինչ կայ աւելի բարձր մարդասիրական՝ քան մտածել թշուառների մասին... Ասում էք սոսկալի է նրանց դրութիւնը... Ո՛չ, այդտեղ ձեզ հետ համաձայն չեմ. գիտէք ինչ սկզբունքով։ Այդ խնդրի մա-

սին ես իմ որոշ սկզբունքներն ունիմ... Գործաւոր մարդը, առ հասարակ, ագէտ, անկիրթ է լինում... Ասում էք ո՞վ է մեղաւորը։—Մեղաւորը, ի հարկէ, խոստովանում եմ, միայն իրանք չեն, այլ և ծնողները, որ նրանց ուսման չեն տուել...—Հա՛, ես ասում էի, որ գործաւորը ագէտ, անկիրթ է լինում. իսկ եթէ այդպիսի ագէտների դրութիւնը բարւոքի, նրանք կըսկսեն խմել, հարբել և անբարոյական գործերով զբաղուել... Սխալւում եմ...—Երբէք չեմ սխալւում։ Օրինակ կուզէք.—տամ ձեզ օրինակ... Ուզում էք լսել. շատ լաւ. ուրեմն լսեցէք։

...Մեր գործարանում Սիմոն անունով մի մարդ կայ. զարարաղցի հայ։ Երբ նոր էր եկել, կտրիճ և արագ՝ կպել էր գործին և ես սիրում էի այդ գործաւորին։ Հաւատարիմ էր և սրտացաւ՝ որպէս ես՝ իմ գործի համար։ Ո՛չ մի բան չէր մերժում անելու. ինչ որ տային, գիշեր թէ ցերեկ, գործում էր. առաւօտ վաղվաղ՝ նա էր առաջինը, երեկոյեան էլ նա էր վերջինը։

Նոր էր գիւղից եկել. ինքն էլ հնազանդ, լսող, ընդունակ... Տուն ու տեղը, կնիկն ու որդիները գիւղումն էր թողել, և լաւ էր արել։ Գործաւորն ինչ է, որ ընտանիք ունենայ, որդի ցանկանայ։—Գործաւորը չըպիտի ամուսնանայ...—Ասում էք՝ սխալւում եմ... Դուք էք

սխալւում։—Ով փող չունի այնքան՝ որ որդի մեծացնի և կնոջը հագցնի—նա ամուսնանալու իրաւունք չունի... Այո՛, այդ է իմ համոզումը...—Ասում էք սխա՞լ է...—Տեսնում էք ինձ։ Փառք Աստծու, գործարան ունիմ և փող՝ բաւական, բայց այսքանը բաւ չէ կին հագցնելու, որդի մեծացնելու... —Հարցնում էք թէ ինչպէս եմ մենակ ապրում։ —Բայց, շատ պարզ, պարոն, միթէ՞ այստեղ քիչ կին կայ. փող ասածդ ինչո՞ւ չի տայ քեզ։—Չեմ ամուսնացել, և աւելի ազատ պարտականութիւններից, կանայք էլ ունիմ և լաւ էլ ապրում եմ... —Բայց այս թոզնենք դեռ, պատմութիւնս պատմեմ...

Այդպէս, Սիմոնը վեց ամիս գործեց լաւ, հանդարտ։—Բայց մի օր, սատանան փորը մտաւ. եկաւ թէ՝ «Աղա, չեմ կարող մենակ, ուզում եմ կնիկս ու որդիքս բերել»... —«Ա՛յ տղայ, Սիմոն,—ասում եմ նրան—յիմա՞ր ես՝ ինչ ես. ինչո՞ւ ազատութիւնդ ուզում ես թաղել, ձեռքդ ու ոտքդ կապել. կնիկ ես ուզում՝ —քաղաքումը բո՞լ. կիրակի օրերը գնա՞ քէֆ արա. էժանները շատ կայ»... Սխմախը սատիկ կարմրեց, շատ էլ ամաչեց, թէ՝ «Աղա, ինչպէս կըլինի, ես կնկայ տէր, որդիներ ունիմ»... —«Դէ՛հ, զահլէս տարիր, կորիր—ասում եմ—յիմա՞ր ես դու. գնա՛, կնիկդ բերես —չըբերես՝ դու գիտես, ոսճիկդ նոյնն է, աշ-

խատուտիկնդ նոյնը»։—Թէ՝ «Դէ, աղա, մի քիչ աւելացուր»... Խղճացի. շատ աղաչեց. մէկ էլ որ՝ լաւ գործաւոր էր, ինչի՞ անես կըբանեցնէիր։—15 մանէթը 20 չինեցի... —Բարեգործութիւնը ազնիւ բան է...—Ասում էք քիչ է... Զարմանալի էք։ Վեց ամիս գործողներից ո՞ւն է այդքանի հասել. էն էլ բուի գիւղացի, որ ոչ մաշինից և ոչ էլ շոգուց հասկացողութիւն ունի... —Ո՛չ, լաւ ռոճիկ էր. կառավարիչս ասում էր թէ՝ երես եմ տալիս միւսներին՝ իմ բարեգործութիւնով։—Իրաւունք ունէր. խելօք մարդ է կառավարիչս։—Մի քանի օր յետոյ, ստիպւած էի վանդել մի քանիսին, որոնք եկել, նոյնպէս ռոճիկի յաւելումն էին խընդրում։

Ինչ որ է։—Սիմոնս տաս օր խնդրեց—տուի։ Այդ լաւութիւնն էլ արի։ Ելաւ գնաց Զաբաբաղ, կինն ու տղերքը շալակեց՝ եկաւ։ Պիտի չ՚ուրանալ. սկզբում ուրախ և լաւ գործում էր. կառավարիչս գոհ էր նրանից. և որովհետև ռոճիկն աւելացրել էի, նրան գիշերներն էլ մէկ-մէկ բանեցնում էր։—Սիրում եմ այդպէս խղճմտանքով կառավարիչներին՝ որոնք աշխատում են միշտ յօգուտ տէրերի։—Ինչ էք ասում...—Ասում էք՝ անգո՞ւթ մարդ է...—Զափազանց սխալւում էք, նա շատ գթասիրտ մարդ է. միշտ իր կերակուրի մնացորդը բանւորներին է տալիս, բարեգործական ընկերութեան անդամ է, թիւրքահայ որբերին տասը ռուբլի տւաւ...—Ինչո՞ւ էք ասում, իմ կառավարիչը աղքատանոցի էլ հոգաբարձու է. ինքն ու իր կինը—ես եմ տեսել—անձամբ են թըշւառներին կերակուր բաժանում...—Եւ վերջապէս նա ինժիներ էլ է և... լաւ սիրուն կնիկ էլ ունի... Այո՞...—Բայց թողէք պատմութիւնս շարունակեմ...

Հա, Սիմոնս էր, մի երեք ամիս լաւ գործեց. մէկ էլ, յանկարծ մի օր տեսնեմ՝ մօտս եկաւ թէ՝—«Աղա, տղերքս այստեղ առանց ուսումի են մնում, համ էլ հիւանդանում են. քաղաք պիտի տանեմ»։—«Ո՞նց—ասացի—տօ ախմախ, ստացածդ ինչ է, որ նրանց քաղաքումը ապրեցնես։ Եւ վերջապէս տղայքդ ուսումը ինչ կանեն. թող գործը տեսնեն՝ աչքերը վարժւի, որ յետոյ լաւ գործաւորներ դառնան»...

Բայց Սիմոնս, չէ, կամաց-կամաց փչանում էր։ Մէկ օր էլ տեսնեմ՝ քաղաքիցը հարբած է եկել... «Սիմոն, այդ ինչ է, հարբել ես սկսել»... Թէ՝ «Աղա, տօն օր էր, մի քիչ քէֆ արի»... Տեսա՞ր դու։ Գործաւոր է, հազիւ 20 ռուբլի ռոճիկ ունի ու քէֆ էլ է անում... Մի ուրիշ օր էլ տեսնենք՝ հիւանդացաւ։ Բժիշկը եկաւ, ասաց՝ որ Սիմոնը շատ է գործում, պիտի սովորական ժամերից դուրս՝ չ՚աշխատի...—Այդտեղ ես ինչ մեղաւոր եմ.

ինքն էր ուզում փող շատ աշխատել՝ գիշերներն էլ էր բանում...—Ի՞նչ, հարցնում էք թէ դրա համար առանձին վճար ստանում էր... —Ճշմարիտ, չեմ յիշում...—Եւ ինչո՞ւ պիտի ստանար. քսան ռուբլին հերիք չէ՞ր... Բայց ես արգելեցի նրան գիշերները բանել։ Եւ ինչ էք կարծում, մի քանի օրից յետոյ լսեցի՝ թէ գնում է ուրիշ գործարան և գիշերները բանում, որ ինչ է, աւելի փող ստանայ։—Տեսնո՞ւմ էք անպիտանին։ Կանչում եմ, յանդիմանում։—«Անպիտան,—ասում եմ.—դու քեզ չե՞ս խնայում. և վերջապէս ուրիշ տեղ բանել ինչպէս ես համարձակւում։ Սիմոնս թէ՝ «բաս ինչ անեմ, աղա, քսան ռուբլին չի հերիքում, երեխէրքս հաց են ուզում, կնիկս՝ շոր»—«Դնա կորիր,—ասում եմ.—փողդ որ խմելու չընտաս՝ կըհերիքի»։ Նա թէ՝ «Աղա, մէկ անգամ խմելս տեսել ես, այն էլ մի բան էր՝ անցաւ. ես չեմ խմում»... Ի՞նչպէս չէ։ Սո՛ւտ էր ասում։ Մի անգամ խմողը էլի կըխմի։—Ինչ էք ասում։—Սխա՞լ եմ մտածում...—Ո՛չ, դուք էք սխալւում. լսեցէք և կըտեսնէք։

Ու արգելեցի Սիմոնին՝ գիշերը ուրիշ տեղ բանելու։—Սիմոնն էր՝ այնուհետև ամեն օր գլուխս տանում էր թէ՝ «փող չունեմ, ռոճիկս քիչ է, տղերքս տկլոր են, կինս շոր չունի»...—«Ցո՛, կնիկդ որ շոր է ուզում, թող ինքը գնայ աշխատի. ասում ես՝ առողջ է.

թող ուրեմն փող շահի»։—Թէ՝ «բաս ո՞վ տղերքը պահի»... Ցիմա՛ր են, յի՛մար. տղերքը պահելս որն է. թող խաղան ողջ օրը. մի քանի շահի էլ որ դրացի ռուս կնկան կամ աղախնին տաս՝ աչքը վրանները կըպահի։

Խօսքս խելքին մտաւ։ Խելօք խօսք էր—ինչո՞ւ չըմտնէր։ Կնիկն էր, գնաց ու առաջ կառավարչիս մօտ սկսեց բանել։ Կառավարչիս կնիկը նրան շատ գովեց ինձ. ասաց՝ լաւ բանող է։ Մի օր էլ ես տեսայ։ Լաւ բանում էր. բայց աւելի լաւ՝ սիրուն կնիկ էր. առողջ, թուշերը կարմիր, աչքերը մեծ-մեծ... Տեսնում էք էդ աղքատներին.—ուտելու հաց չունեն՝ գնում են սիրուն կնիկ առնում... —Մի օր էլ Սիմոնին ասի, որ կնկանը ուղարկի քաղաք ինձ մօտ՝ մեր պոլերը սրբի։ Կնիկն էլ եկաւ, ես ու իմ Աստուածը, լա՛ւ աշխատեց, պոլերը սրբից... Ես էլ խղճալով՝ 5 մանէթ տուի. Սիմոնի ռոճիկն էլ 25-ի բարձրացրի...

Կնիկը մի քանի օր էլ եկաւ, շորերս կարեց... —Մի օր էլ, ինչ մեղքս պահեմ, որ տեսայ նրա սիրուն աչքերը՝ քէֆս եկաւ. հանեցի ու տասանոցը կոխեցի ձեռքին... Առաջ՝ «ջեմ-ջեմ» արաւ, յետոյ, որ վախցրի թէ մարդուն դուրս կանեմ՝ խօսքս կատարեց... Ու մի ուրիշ տասանոց էլ տուի...

Այնուհետև շաբաթը մի օր ինձ մօտ էր գալիս, մի կարմիր տասանոց առնում ու

գնում... —Եւ Սիմոնս լաւ կառավարում էր, էլ չէր գանգատւում...—Ասում էք կեղտոտ բան եմ արել... Կեղտոտ..., —Խնդրեմ, խնդրեմ... Դուք ծիծաղելի էք, ճշմարիտ. չէ՞ որ զրանով ես բարեգործութիւն արի Սիմոնի որդոցը քաղցած չըթողի...—Ասում էք արածս բարեգործութիւն չէր...

—Բայց խօսքիս վերջը լսեցէք: Սիմոնս գնալով՝ փոխւեց, փչացաւ: Չըգիտեմ ինչու՝ գործից սառեց. էլ խօսքս չէր լսում, մէկ մէկ էլ, մինչև իսկ, դէմ էր խօսում... Այդպէս են ահա դրանք. հէնց որ մի քիչ լաւ ապրուստ են ունենում, մի քիչ էլ քաղցը ես վարւում հետները՝ իսկոյն երես են առնում, հպարտանում են, ծուլանում... Սիմոնս այնուհետև գործին ուշ էր գալիս, շուտ էր դուրս գնում: Ո՛չ յանդիմանութիւն, ո՛չ էլ միշտ տուգանք՝ օգուտ չ'արին. դուրս հանել չէի ուզում. կնիկը աղաչում էր, մեղքս էր գալիս, խղճում էի որդկերանցը...

Ու թողի որ Սիմոնը ուզածն անէր: Կառավարչին էլ խնդրեցի, որ նրան հանգիստ թողնէր... Սիմոնը աւելի երես առաւ. այժմ օրերով գործի չէր գալիս: Կնիկն ինձ մօտ աշխատում էր, իսկ ինքը կինեանները քաշ էր գալիս, խմում ու հարբում... Ոտ-ձիկը կարում էինք, հայհոյում, կռւում,—բայց

որքան կասես: Հէնց որ փողը ստանում էր՝ խմում էր, հարբում, փողոցներն ընկնում...

—Ինչ ասացիք... Ասում էք այժմ ո՞ւր է...—Ո՞ւր պիտ լինի. մեզ մօտ է դեռ. կնիկը գործում է ինձ մօտ՝ իրեն էլ խղճում ենք. այդպէս՝ ապրում են... —Ես բարի սիրտ ունեմ, նրանց խեղճ չեմ թողնում. բարեգործութիւնը սիրում եմ...—Բարեգործութիւնը, այո՛, շատ ազնիւ բան է...—Ժողովրդին... Այո՛, կըզամ, անպատճառ կըզամ և այնտեղ կըխօսեմ էլ...—Ասացիք նիւթն ինչ է...—Թըշուառների մասին մտածել...— Օ, այո՛. դա շատ լաւ միտք է... —Կըզամ անպատճառ... 'Ի հարկէ, ինչ կայ աւելի բարձր մարդասիրական՝ քան մտածել թշուառների մասին...

Եւ ես, բարեգործ պարոն, պարտք եմ համարում այդ բարձր—մարդասիրական բարեգործութիւնդ՝ անմահացնել այս գրքի էջերում:

II

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ.

Սրանից շատ տարիներ առաջ, պատահեց՝ որ ես մի գործարանում գլխաւոր հաշուապահի պաշտօն ստացայ։ Հարուստ դրամատիրոջ գործարան էր։

Ընկերներ ունէի դրասենեակում. ոչ մէկի ոչ ազգանունն եմ յիշում և ոչ էլ դէմքը։ Յիշում եմ միայն—և այն էլ նոր պատահած մի դէպքի առթիւ—ամենափոքը դրագրին, մթերանոցի հաշուապահին։—Երկարահասակ, շիլ աչքերով շոր երիտասարդ էր. լուռ, խոնարհ ու քծնող։

Սովորութիւն ունէինք—երևի ես էի ներմուծել այդ սովորութիւնը—որ գործարանի գործերի դադարելուց յետոյ, դեռ դուրս չէինք գնում դրասենեակից, այլ միասին, բոլոր ծառայողներս, սկսում էինք զանազան,

գործարանին չվերաբերող, նիւթերի վրայ խօսակցել. օրինակ՝ գրականութեան, թատրոնի, լրագիրների... Մի օր էլ, մինչև իսկ, քիչ աւելի ոգևորուած, վճռեցինք մի խմբակ կազմել, փող հաւաքել և գրքեր հրատարակել։

Մթերանոցի հաշուապահը միշտ լուռ՝ ներս էր մտնում, կծկւում վառարանի կողքին և առանց մի բառ արտասանելու՝ լսում էր մինչև վերջ։

Այդ երեկոյ, երբ ոգևորուած՝ վճիռը կայացրինք և քիչ հոգեպէս բաւականութիւն ստացած տուն էինք գնում, լսեցի թէ ինչպէս, մթերանոցի հաշուապահ Յովհաննէսը՝ հարցնում էր իմ օգնականներից մէկին.

—Այդ բոլորը շատ լաւ, բայց մեզ համար այդ թաղիքից գլխարկ կարո՞ղ է դուրս գալ...

Երկար չըհասկացայ այդ ոճը։ Բայց յետոյ, ամիսներ յետոյ, երբ հաշուապահս սկսեց չափից աւելի «գլխարկներ հանել» մթերանոցի մէջ եղած «թաղիքներից», և երբ ես ստիպւած էի արտաքսել նրան, այն ժամանակ միայն ըմբռնել էի այդ ոճի միտքը...

Բայց այս բոլորը ինչու յիշեցի՝ տարիներ անցնելուց յետոյ։ Պատճառը ահա թէ ինչ էր։

Սրանից մի քանի ամիս առաջ, երբ զբօսնում էի Ծովեղբեայ քաղաքներից մէկի պարտէզում, բազմութեան մէջ, սեղանի առաջ նստած տեսայ երկու անձի, որոնցից մէկի հետ ծանօթ էի։

Բարևեցի և ուզեցի հեռանալ։

—Սպասեցէք,—բռնեց ինձ ծանօթս,—մի՞թէ այս պարոնին չէք ճանաչում. նա ձեզ լաւ յիշում է։

Հետաքրքրուած՝ նայեցի։ Հասակաւոր անձ էր. նիհար, չոր, քիչ շիլ. շատ կանոնաւոր և մինչև իսկ հարուստ էր հագնուած. ժպտելով ինձ էր նայում։

—Չեմ յիշում.—ասացի։

—Նստեցէք մեզ մօտ,—ստիպեց ծանօթը,—պարոն Յովհաննէսը ձեզ շատ լաւ ճանաչում է, երբ մեր քաղաքումն էիք... Ապա, մէկ լաւ նայեցէք...

Երկուսն էլ ծիծաղում էին։

Ոչքան պրպտեցի յիշողութիւնս, չկարողացայ յիշել։ Դէմքը սակայն, նմանեցրի մէկին և ասացի.

—Ներեցէք բայց, այդ դէմքը յիշեցնում է ինձ մի ծառայողի, որ ինձ հետ էր սրանից

10 տարի առաջ և ծառայում էր մի գործարանում... Բայց...

Ու չշարունակեցի, վիրաւորել չկամենալով։

—Ձեր գործարանի մթերանոցի հաշուապահին յիշեցիք, չէ՞...—խօսեց անծանօթը.—լաւ ուրեմն, չէք սխալուել. ես նա եմ...

—Դուք Յովհաննէսն էք.—գոչեցի զարմացած։

—Այո՛,—ժպտեց նա.—ձեր խոնարհ ծառան և ձեր շնորհիւ այժմ վաճառական եմ և ոչ թէ հաշուապահ։

—Ի՞նչ էք ասում. դուք վաճառակա՞ն էք դարձել։

—Եւ բաւական հարուստ վաճառական,—մէջ մտաւ ծանօթս.—պ. Յովհաննէսը այժմ Մոսկուա է գնում՝ ապրանք բերելու իրանց խանութի համար. ընկեր է մի վաճառականի հետ։

Յանկարծ յիշեցի «թաղիքից գլխարկ հանելը»։

—Ի հարկէ,—ժպտեցի,—չի մոռանալ պարոնը՝ այդ թաղիքից իր համար գլխարկներ հանելը...

«Պարոն» Յովհաննէսը բարձրաձայն ծիծաղեց, յետոյ մէկէն լրջացաւ և ծանրութեամբ ասաց.

—Լսեցէք ինչ կասեմ ձեզ, պարոն

գրող... Ձեր կարծիքով ինչ բան է կեանքը. դուք ուսումնական էք, լաւ կըգիտենաք:

Ու հեգնօրէն ինձ նայելով՝ սպասեց:

—Կեանքը, — ասացի—մի խայտառակ խեղկատակութիւն է, որում յաճախ սողունը՝ թռչուն և թռչունը՝ սողուն է դառնում...

Կարծեցի թէ լաւ էի խայթել: Հեգնական ժպիտն աւելացրեց և քիչ լռելուց յետոյ՝ ասաց.

—Իսկ ես ուրիշ երգ կ'երգեմ և իմ երգը աւելի լաւն է: Կեանքը, պարոն, թաղիք է. և վայ նրան, ով չի աշխատիլ այդ թաղիքից գլխարկ հանել իր համար:

—Ամէն միջոցներով:

—Ամէն.—պնդեց Յովհաննէսը:—Մարդը նա է, որ մկրատը մինչ ձեռքին պատրաստ՝ առիթը չի փախցնիլ իր բաժինը հանելու: Ի հարկէ, նայելով ժամանակին՝ լուռ, գաղտնի, սողոսկելով կամ աչքակապութեամբ. երբ յարմար լինի՝ շառաչիւնով, ազատ, համարձակութեամբ պիտի կարել աջ ու ահեակ... Կեանքը, պարոն, թաղիք է և ով մկրատ չի ունենալ, և կամ, ով մկրատ ունի և կարել չի կարողանալ՝ քաղցած կըմնայ...—Խնդրեմ ասացէք ինձ, պարոն գրող, ինչ կանէք, եթէ անօթի էք և ձեր առջև կայ համով ուղեղ, միայն կարծը ոսկորի մէջ թաղցրած:

—Ոսկորը կըկոտրեմ. դրանից էլ պարզ բան:

Յովհաննէսը ծիծաղեց և չիլ աչքերը հեգնութեամբ ուղղեց ինձ:

—Հը'մ—ասաց նա.—իսկոյն երևում է, որ դուք կեանքի մարդ չէք: Ես ուրիշ կերպ կըվարուէի: Խոստովանուեցէք, որ «ոսկորը» կոտրելու համար՝ մեծ ոյժ է հարկաւոր. մի ոյժ, որից շատերը չունեն: Իմ գործ դրած միջոցը շատ աւելի հեշտ է և ճարպիկ:—Կըդնեմ առաջս մի կակուղ հացի կտոր, ոսկորը շուռ կըտամ և հանդարտ ու համբերութեամբ այնքան կըխփեմ հացին, որ բոլորը ուղեղը, մինչև յետին կտորը՝ դուրս կըտամ: Այդպէսով ուղեղից ոչինչ չեմ կորցնիլ, ոյժ չեմ գործ դնիլ, այլ և ոսկորը կոտրելու դէպքում՝ աչքս հանելու վտանգից էլ զերծ կըմնամ... Սրան ինչ կասէք:

—Կոլոմբոսի ձուին նմանեց. ասաց ծանօթս ծիծաղելով:

—Հէնց բանն էլ դրանումն է,—շարունակեց Յովհաննէսը.—կեանքը ուղեղով լի մի կարծը ոսկոր է: Ով վարպետութեամբ կըհանի ուղեղը, նա կըկշտանայ. ով կ'աշխատի ուղիղ, կտրուկ միջոցներով հանել, նա կըվտանգի և ուղեղը ցրուելու հաւանականութեան մէջ կըլինի միշտ...

Մէկէն, այդ բոլորը այնքան կեղտոտ

հնչեց ականջիս, որ ոտքի ելայ մեկնելու։

—Գնում էք,—ասաց Յովհաննէսը.—բայց ես ձեզնից մի բան էի ուզում հարցնել։

—Ասացէք. կանգ առի և սառը կերպարանք ստացայ։

Նա լռութեամբ քիչ նայեց ինձ, յետոյ համարձակ ժպիտ դէմքին՝ ասաց։

—Կարդացի, որ մի ինչ որ վէպ ունիք և հրատարակիչ էք որոնում։ Ուրքան արդեօք ծախս կընոտի։

—Ձեր ինչին է պէտք։

—Դուք ասացէք,—շարունակեց նա աւելի համարձակութեամբ.—ուզում եմ իմանալ։

—Մօտ 500 ռուբլի։

—Լաւ ուրեմն, ես ձեզ համար կըգտնեմ հրատարակիչ։

—Գուցէ դուք էք։

—Ե՞ս... Ոչ. կարող էի անել, բայց մտադիր չեմ. այդ թաղիքներից օգուտ չըկայ. գլխարկ հանել չի կարելի։ Բայց ես մի ծանօթ վաճառական ունեմ և նա սիրում է այդպէս բաներ անել. կըհամոզեմ՝ որ յանձն առնի հրատարակելու։

—Եւ, ի հարկէ,—ասացի ես զգւանքով.—չէք մոռանալ այդ թաղիքից էլ ձեզ համար գլխարկ հանելու։

Յովհաննէսը քիչ լռեց, շրթունքները պրկեց, յետոյ ոտքի ելաւ և ասաց.

—Այո, կըհանեմ... Ասենք ես այս իզուր եմ ասում ձեզ. դուք, միևնոյն է, չէք հասկանալ։—Համաձայն էք գրուածքը տալ։

Նայեցի երեսին և առանց մի բառ աւելացնելու՝ հեռացայ։ Մթերանոցի փոքրիկ հաշուապահը իմ գլուխն իրը մկրատ էր ուզում գործածել՝ իր համար գլխարկներ հանելու...

Անշուշտ այժմ Յովհաննէսը ծիծաղում է, որ ես չ'օգտուեցի իր առատաձեռնութիւնից։ Բայց, պարոն Յովհաննէս, դարձեալ կարող ես «թաղիքից գլխարկ հանել», որովհետև առատաձեռնութիւնդ անմահացնում եմ այս գրքի էջերում...

III

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՆ

—Ի՞նչպէս է, վարժապետ, հաւանո՞ւմ ես շինածս եկեղեցին։

—Շքեղ է, Գրիգոր աղա, շատ ծախս է նստել։

—Ճիշտ 30,000... և՛ աղօթեցէք... Շատ է, չէ՞։

Ու Գրիգոր աղան, որ տեղի-անտեղի, գլխին մեխուած այդ «Եւ աղօթեցէք» բառերը կրկնում էր, զարթ ու հպարտ՝ ծիծաղեց։

Եւ իրաւ, շքեղ էր եկեղեցին, որ ես տեսայ այդ գիւղաքաղաքում։ Շքեղ էր՝ տեղին համեմատ։ Գիւղաքաղաքը ողորմելի էր. ընդարձակ, պարտիզալից, բայց ժողովուրդը աղքատ և տները հին, խարխուլ։ Միակ լաւ տունը Գրիգոր աղայինն էր, միակ լաւ հագնուած անձը՝ Գրիգոր աղան էր։

Երբ ինձ տեսաւ իրանց գիւղաքաղաքը այցի եկած, խսկոյն ճաշի հրաւիրեց։ Բայց,

ճաշից առաջ՝ իր շինել տուած եկեղեցին ցոյց տալու տարաւ և խօսք առաւ՝ որ գրեմ նրա այդ «մեծ գործի» մասին։

Գրիգոր աղային դուք չէք ճանաչում։ Ուրեմն նրա գիւղաքաղաքն էլ չըգիտէք։ Հարուստ, շատ հարուստ մարդ է Գրիգոր աղան. ունի տներ, կալուածներ և մի լաւ խանութ։ Հօրից ոչինչ չէ ժառանգել—չըկարծէք այդքան ողորմելի մարդ է Գրիգոր աղան—հայրը հասարակ կօշկակար է եղել, որ մեռել է պարտքով։ Բայց որդին։ Նա այժմ արդէն յիսունի մօտ է, բայց յիսուն հազարից աւելի կանխիկ փող ունի. աղջիկն էլ—միակ որդին—մի հարուստի վրայ է պսակել։ Ինքն է, իր կինը, մի թիւրքահայ որբուկ որդեգիր առած։

Շատ վատ-վատ բաներ են խօսում գիւղաքաղաքում Գրիգոր աղայի մասին, ծածուկ փսփսում։ Ասում են՝ որ իբր թէ ողջ գիւղաքաղաքը նա է աղքատացրել, ամենքի արիւնը ծծել, մուրհակներով ու տոկոսներով իրեն գերի դարձրել։

Բայց, դէհ, ինչ արած, մարդը խօ եկեղեցի է շինել, կաթուղիկոսից օրհնութեան կոնդակ ստացել... Այժմ էլ իր համար հանգիստ նստել է, շահածը կրկնապատկում...

Անուշներ, Գրիգոր աղա, միամիտ կաց, շինածդ եկեղեցին շքեղ է...

—Ասացէք խնդրեմ, Գրիգոր աղա.—հարց-

նում եմ—ինչու էք չինել այս եկեղեցին։

—Ե՛ւ աղօթեցէք...—զարմացաւ նա.—եկեղեցին ինչու կըշինեն. աղօթելու համար։ Մէկ էլ որ, ուզում եմ յիշատակս մնայ մեր քաղաքում։

—Հա... յիշատակդ... այդ լաւ է։

—Ի հարկէ.—հպարտացաւ նա—մէջն էլ եմ ես զարդարել, և՛ աղօթեցէք... Պատկերներն էլ իմն է. կաթուղիկոսից էլ օրհնութեան կոնդակ եմ ստացել...

Եւ տանում է ինձ ճաշի։

Բայց երբ տուն մտանք, սրահի դռան կողքին, կոշիկները հանած՝ նստել էին երեք հնամաշ հագուստներով տեղացիք։ Մեզ տեսնելուն պէս՝ ոտքի ելան և խոնարհ՝ բարևեցին։

—Հա,—ասաց նրանց աղան—ինչ էք ուզում։

Ցետոյ դարձաւ ինձ և աւելացրեց.

—Վարժապետ, դուք մի քիչ պլանս ածէք, մինչև ես տեսնեմ սրանք ինչ են ուզում։

Հասկացայ։ Աղան չէր ուզում, որ ես նրանց խօսակցութիւնը լսէի։ Դաշնամուր ունէին. աղան բերել էր աւել իր ամուսնացած աղջկայ համար. ամառներն այդ աղջիկը գալիս էր իր հօր մօտ մնալու։

Նստեցի և փոխանակ եղանակ նւագելու, միմիայն աններդաշնակ ձայներ էի հանում և

միւս կողմից ականջս խօսողների կողմն էի ուղղել։

—Հը՞, փող էք բերել,—հարցնում էր աղան։

—Չէ, աղա,—ասաց մէկը.—եկել ենք խնդրելու, որ մի քիչ էլ ժամանակ տաս. քէսատութիւն է, գործ չըկայ, առևտուր չըկայ. մուրհակները նորոգենք։

—Չէ, ախպէր, էդ չեղաւ։ Հերիք է, և՛ աղօթեցէք... Փողս բերէք՝ ու պրծնի գնայ. արդէն երկու անգամ նորոգել ենք մուրհակը։

—Հ՛ունինք, աղա, Ասուած է վկայ՝ որ չունինք,—խօսեց երկրորդը.—այս քէսատութեան ժամանակ, ես օրինակ, 400 ռուբլի որտեղից վճարեմ։

—Հորս հարիւր, և՛ աղօթեցէք... գոչեց աղան.—քոնը 600 է, ոչ թէ 400...

—Ես տոկոսը չէի հաշուում...

—Մուրհակի մէջ 600 է գրած. ես տոկոս-մոկոս չըգիտեմ...

Այստեղ նա ինձ դարձաւ. երևի կասկածեց, որ լսում էի իրեն։

—Վարժապետ,—ասաց նա.—եւրոպական եղանակներ ածիր, ասիականները չեմ սիրում։

Ոչինչ չէի նւագում, բայց զարմացայ։ Ասիացի աղա և եւրոպական եղանակի սիրահար։

—Ի՞նչպէս,—դարձայ նրան կիսովին.—

ասիական եղանակներ չէք սիրում։

—Հա, չեմ սիրում, և՛ աղօթեցէք... Վայլս՝ բան ածիր, թէ չէ՝ շահնազ, բայաթի՝ դրանք կոպիտ, գիւղացու բաներ են... դրանք մօդա չեն—ռամիկի եղանակներ են...

Քիչ մնաց ծիծաղէի. զսպեցի ինձ և սկսեցի մի բան նուագել։

—Աղա,—ասում էր այդ միջոցին եկեղեցիներից մէկը.—հրամանքդ լաւ գիտես, որ այս տարի ամեն գործերը լաւ չըգնացին. այգին բերք չրտաւ, առևտուրս վատ գնաց, տան մէջ հիւանդ ունէի... Խնդրում եմ, մուրհակը փոխենք և... և մի քիչ էլ տոկոսը պակասացրու...

—Ի՞նչպէս, ինչպէս, և աղօթեցէ՛ք (գոչեց նա «և աղօթեցէք»-ը հայհոյելու շեշտով)... տոկոսը քի՞չ... 25-ից էլ քիչ... չէ՞, ախպէր. իմը այդ է. ես էլ ընտանիք ունիմ, խեղճ մարդ եմ... ձեզ համար էլ եկեղեցի եմ շինել...

Այլ ես չըլսեցի. աղան երևի զգաց՝ որ ես ձգտում եմ լսելու։ Խօսքը՞ ընդհատեց, թէ՞ կամաց ձայնով մի բան ասաց նրանց—չըգիտեմ. միայն մի բոպէ ոչինչ չըլսելուց յետոյ, ականջիս դիպաւ նրա ձայնը, որ ասում էր.

—Լաւ, լաւ, այժմ գնացէք, յետոյ կըզաք. հիւր ունիմ դեռ...

Ահա ուրեմն թէ աղան ինչպէս էր դի-

զել իր հարստութիւնը, որտեղից էր իր տունը, կալուածները, այն դաշնամուրը՝ որի վրայ ես նուագում էի և վերջապէս այն շքեղ եկեղեցին, որի համար նա օրհնութեան կոնդակ էր ստացել։

Հազիւ ճաշել կարողացայ, թէև աղան ամեն կերպ պատւում էր ինձ, որպէս զի լաւ գովեմ իր բարեգործութիւնը, շինած եկեղեցին...

Ու երբ անցնում էի այդ եկեղեցու առջևից, պատկերացաւ ինձ այդ սարդը, որ արիւնոտ ճանկերով, արիւն-քրտինքոտ շաղախով էր ծեփել Աստծու տաճարը, կամենալով նրան էլ խաբել. պատկերացաւ սարդը իր արիւնոտ շրթունքներով՝ եկեղեցու պատերը, դուռն ու պատկերները համբուրելիս.

—Ե՛ւ աղօթեցէք... ես եմ շինել այս եկեղեցին...

Այո, Գրիգոր աղա, և՛ աղօթեցէք... քո շինած եկեղեցին պարտք եմ համարում անմահացնել այս գրքի էջերում։ Խոստացել էի քեզ այդ...

ՄԱՅՐԻ ԱՆՏԱՌՈՒՄ

(Ե Ր Գ)

Սահուն, լպրծուն է այն զառիվայրը, որով ճգնում եմ անտառի սիրտը մտնել։ Լպրծուն է ամեն կողմ. գետնի վրայ փռված մայրու ~~փշերն~~ գեղնած փշերից ցորենի գոյն է ստացել անտառի յատակը։ Նոյն ցորենագոյն ստվերը գծված է իւրաքանչիւր ծառի մշտադալար ոստերի վրայ։

Գետինը ծածկված է գորշ կոճիճներով։ Վերևում, ամեն ճիւղի ծայրին գորշ բիծ են դրել սրճագոյն նորածիլ կոճիճներ՝ շրջապատված երկճիւղ ասեղիկներով։ Ծառերի բների վրայ փչրված ոստերի մնացորդներից աստիճաններ են կազմել և վերևում, ուղղաձիգ, բարձր, հետզհետէ բարակացող ոստերի շքեղ կոյտեր, մէջ տեղից ուռեցած՝ ծայրերով՝ սրանում են դէպի կապտութիւնը։ Խուլ անտառում այդ բոլորը խորհրդաւոր մթութիւն է ձգել. բարձունքներում շշնջում են

ճիւղերը՝ նման հեռացող և մոտեցող ջրերի շառաչիւնի։

...Գեղեցիկ է բնութեան մէջ ամեն ինչ. յետին ծառն ու անկիւնը, խոտն ու շիւղը գեղեցիկ է. գեղեցիկ է նոյն իսկ մահը և ծերութիւնը նրա մէջ։

...Ոչքա՜ն գեղեցիկ կըմնային այդ ամենը, եթէ արարածները չըկոխոտէին միմեանց, չ'ապականէին, չըխեղաթիւրէին իրանց ընդհանուր մօր զաւակներին։ Քայլում է արարածը՝ ճգմում է հաճոյքի համար, հրէշացնում է՝ տգեղութեան սիրոյ բնազդմամբ...

...Յիշում եմ թէ ինչպէս մի օր ծընեւացի մի մանուկ, բնութեան գեղեցկութեան կողմից՝ տաւ ինձ առաջին ապտակը, երբ մարդկային աւերիչ հակումս կոտրում էր ծաղիկներ և պոկոտելով ու տրորելով զւարճանում։

—Պարոն,—ասաց նա ինձ—մի՛թէ մեղք չէ այդպէս վարուել ծաղիկների հետ։

Զարմացել էի։

—Եւ մի՛թէ,—շարունակեց նա,—չէք լսում այդ ձեր՝ կեանքից զրկած արարածների լացը։

—Ի՞նչպէս—ասացի զարմացած—ծաղիկները լա՞ց են լինում։

—Այո,—պնդեց նա.—մայրս է ասել ինձ. ամեն գեղեցկութիւն, երբ աւերում են նրան՝ արտասուում է. մենք այդ չենք

լսում, որովհետև չար մարդը ականջ և սիրտ չէ ունենում...

Մանուկը մանկաբար ասաց. փափկասիրտ մօր խօսքերը կրկնեց ինչպէս ըմբռնել էր։ Բայց սիրտս հասկացաւ այնպէս՝ ինչպէս ասել էր...

...Ամեն գեղեցկութիւն արտասւում է, երբ աւերում են նրան. մենք չենք լսում լացը, որովհետև չարը՝ ականջ և սիրտ չէ ունենում...

Եւ այնուհետև կարծես, ամեն բանի աւերած գեղեցկութեան լացը, ուր որ լինի նա, հասնում է ականջիս. որովհետև չար չեմ, ոչ, և որովհետև ունիմ ականջ ու սիրտ... Լսում եմ հաշմած ծառի հառաչը, վիրաւոր խոտի հեկեկանքը, լսում տրորած բնության սիրտ ճնշող լացը՝ լինի նա մայրի անտառում կամ մարդկային հասարակութեան մէջ...

Գրք. Պետական Գրադարան
ՀԱՍՀ — СССР
им. А. Мравяна
Ա. ՄՅԱՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0363732

59.999